Վանի թագավորություն

- Վանի թագավորության հիմնադրման մասին վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է մ. թ. ա. XIII–XI դարերում՝ Վանա լճից հարավ հիշատակվող Ուր(ու) ատրի ցեղային միության հիմքի վրա: Մեկ այլ տեսակետ այն կապում է Արարատյան դաշտի հետ՝ ելնելով թագավորության Արարատ-Ուրարտու անվանումից: Ներկայումս ընդունված է այն տեսակետը, ըստ որի՝ թագավորության սկզբնատարածքը Վանա լճի ավազանն է, որի հետ էլ կապվում է թագավորության հիմնական ինքնանվանումը՝ «Բիայնիլի» (այդ պատճառով էլ գիտության մեջ պետությունը հայտնի է նաև «Վանի թագավորություն» անվամբ):

Տուշպայի հիմնադրման արձանագրությունը

- Առաջին վկայված արքան Արամե Ուրարտացին է, որի անունն ասորեստանյան աղբյուրներում 3 անգամ հիշատակվում է մ. թ. ա. 859–843 թթ-ի ընթացքում: Ըստ այլ տեսակետի՝ Վանի թագավորության հիմնադիր-արքան Սարդուրի Ի-ն է՝ Լութիպրիի որդին, որն էլ մ. թ. ա. 830-ական թվականներին կառուցել է Տուշպա (Տոսպ) մայրաքաղաքը: Տուշպայի հիմնադրման արձանագրություններում նա իրեն անվանել է «Նաիրի երկրի արքա» և ներկայացել «մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, արքաների արքա» տիտղոսներով:

ՍԱՐԴՈՒՐԻ Ա

- **Սարդուրի Ա** (Ք.ա. մոտ 835-825թթ), հաջողությամբ դիմակայել է Ասորեստանի կողոպտչական արշավանքներին, ընդարձակել և ամրապնդել թագավորության սահմանները:Սարդուրի Ա միավորել է Վանա լճի ավազանի երկրները և հիմնադրել արքունի նոր բերդաքաղաք Տուշպան (Տոսպավան):

ԻԾՊՈՒԻՆԻԻ (Ք.ա 825-810թթ) բարեփոխումները

- Գրային բարեփոխում՝ տեղական սեպագրի ստեղծում:
- Միասնական դիցարանի ստեղծում:
- Ք.ա 820-ական թթ. Ուրմիո լճի ավազանի հարավում ընդլայնում է թագավորությունը:



«Միերի դուռը» Վանում

Վանի (Տուշպա) միջնաբերդը

ՄԵՆՈՒԱ

- Մենուայի օրոք (Ք.ա 810-786թթ) Վանի թագավորությունը հասել է աննախադեպ հզորության: Երկիրը տնտեսապես հզորացնելու համար նա ծավալել է շինարարական աշխատանքներ, ստեղծել է ոռոգման ցանց. հատկապես նշանավոր է ցայսօր գործող 72 կմ երկարությամբ Մենուայի ջրանցքը:

Մենուայի ջրանցքը

- Մենուան հատուկ ուշադրություն է դարձրել **ռազմական շինարարությանը**՝ ստեղծելով **ամրաշինական մեծ ցանց։** Մենուան հաղթանակներ է տարել տարածաշրջանի ամենահզոր պետության՝ Ասորեստանի նկատմամբ և Վանի թագավորությունը վերածել **գերտերության։**

Թևավոր ցուլի բրոնզե ֆիգուր, որով զարդարվել է արքայական գահը

Բրոնզե գավաթի հատված՝ Սարդուրի II-ի գրությամբ

Մետաղե կաթսա

Բրոնզե վահան և սաղավարտ (մ. թ. ա VIII դար)

- Պեղումներից հայտնաբերված մշակութային արժեքները պահպանվում, ուսումնասիրվում և ցուցադրվում են «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, Հայաստանի պատմության, Երևան քաղաքի, Բրիտանական (Լոնդոն), Առաջավորասիական (Բեռլին) թանգարաններում, Էրմիտաժում (Սանկտ Պետերբուրգ) և այլուր:

Արգիշտի Ա (Ք.ա 786-764թթ)

- Վանի թագավորության արքա մոտ մ. թ.ա. 786 թվականից: Արգիշտի Ա-ի գահակալության տարիներին Վանի հայկական թագավորությունը հասել է հզորության գագաթնակետին: Արգիշտի Ա գործունեությունը վերականգնվում է ճշգրիտ ժամանակագրությամբ շնորհիվ «Խորխոռյան տարեգրության», որում իրադարձությունները ներկայացվում են հանգամանորեն:

- Քաղաքականությունը
- Գրեթե Հայկական ամբողջ լեռնաշխարհը միավորելով Վանի թագավորության մեջ՝ Արգիշտի Ա-ն հետևողականորեն վարել է անհնազանդ ցեղային իշխանությունների կենտրոնախույս ձգտումները ճնշելու քաղաքականություն, թուլացրել է նրանց ուժերը, հարկերի ու պարտավորությունների ենթարկել, նրանց տիրույթներում ռազմական հենակետեր ստեղծել, վերաբնակեցրել իր տիրապետության տակ եղած այլ վայրերում :

Արգիշտի Ա-ի արշավանքներն ու բարեփոխումները

- Ք.ա 785 թ արշավում է Դիաուխի և իր պետությանն է միավորու վերջինիս մեծ մասը:
- Արշավում է Զաբախա կամ Ջավախք՝ մինչև Հզոր Սիրիմու լեռը :
- Ք.ա 783թ արշավանք է ձեռնարկում դեպի արևմուտք՝ Փոքր Ասիայի տարածք :

- Ք.ա. 782 թ հիմնադրում է Էրեբունի ամրոցը :
- Ք.ա 781թ Արգիշտին ոչ միայն պարտության է մատնում ասորեստանյան զորքերին, այլև հասնում է մինչև Պարսուա և Բաբելոնիա :
- Ք.ա. 785-781թթ. Արգիշտի Ա-ի առաջնորդությամբ ստեղծվում է Վանի աշխարհակալությունը :

- Ք.ա 776թ Արարատյան դաշտում հիմնում է Արգիշտիշխինիլի վարչատնտեսական կենտրոնը ։

- Արգիշտի Ա-ի բուն թագավորությունը ձգվում էր Ուրմիայի ավազանի հարավից մինչև Ջավախք, Սևանա լճի ավազանից և Կուր գետից մինչև անդրեփրատյան աջափնյա շրջաններ, Մասիուս և Կորդվաց լեռներից մինչև Ճորոխի ավազան:

Էրեբունի ամրոց

- Ամրոց Վանի թագավորությունում: Էրեբունի քաղաքանունը ուրարտական սկզբնաղբյուրների մեջ առաջին անգամ հանդիպում է Վանի Ս. Սահակ եկեղեցում հայտնաբերված կոթողի բնագրում, դրա 15-րդ տողում URUEr-bu-ni-ni ձևով: Քաղաքը կառուցել է Արգիշտի Ա-ն մ.թ.ա. 782-ին, և ինքն էլ անվանակոչել է այն: Էրեբունի ամրոցի կառուցման թվականը համարվում է Երևան քաղաքի հիմնադրման տարեթիվը:

Ուրարտուի թագավոր Արգիշտի Ի-ի կողմից կառուցված Էրեբունի ամրոցի մասին արձանագրություն

Թարգմանություն՝ Խալդ աստծո մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրեբունի քաղաք՝ ի հզորություն Բիայնա երկրի և ի սարսափ թշնամիների: Արգիշտին ասում է... Հողն ամայի էր, այստեղ ես մեծ գործեր կատարեցի: Խալդ աստծո մեծությամբ Արգիշտի՝ Մենուայի որդի, արքա հզոր, արքա Բիայնա երկրի, տերը Տուշպա քաղաքի»

Էրեբունու ամրոցի պարիսպները (վերականգնված)

Սարդուրի Բ (Ք.ա 764- 735թթ)

Վանի թագավորության արքա մոտ մ.թ.ա. 764 թվականից: Արգիշտի Ա թագավորի որդին էր, գահակիցը և հաջորդը: Նրա գործերի տարեգրությունը ևս հասել է մեզ, որն այսօրվա գիտության մեջ կոչվում է « ՍԱՐԴՈՒՐՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ »:

Սարդուրի Բ-ի արշավանքներն ու բարեփոխումները

- Առաջին խոշոր արշավանքը եղել է Մելիտես պետության դեմ:
- Արշավում է Արմե, որի մայրաքաղաքի մոտ ջախջախում է ասորեստանցիներին:

- Սարդուրի Բ-ն կրկնեց հոր՝ Արգիշտի Ա-ի բացառիկ արշավանքը դեպի Բաբելոնիա։
- Նա Վանի թագավորներից առաջինն էր, որ դուրս է գալիս Միջերկրական ծովի արևելյան ավազան։
- Նա վերացնում է կախյալ թագավորությունները՝ դրանք վերածելով պետության վարչական միավորների։

- Սարդուրի Բ-ի գահակալության ժամանակաշրջանում Վանի տերությունն ունեցել է տարածքային ամենամեծ աճը:

Նրա տերությունը հյուսիսում հասնում է Սև ծով, հյուսիս-արևելքում՝ Կուր գետ, արևելքում՝ Կասպից ծով, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հարավում՝ Պարսից ծոց, հարավ-արևմուտքում՝ Միջերկրական ծով:

Ռուսա Ա

- Վանիթագավորության թագավոր մ.թ.ա. մոտ 735-ից: Սարդուրի Բ-ի որդին և հաջորդը:Գահակալման սկզբնական շրջանում ճնշել է կենտրոնախույս ուժերին, ծավալել լայն շինարարական աշխատանքներ, իրականացրել վարչական վերափոխումներ, ընդարձակել պետության սահմանները, հատկապես հյուսիս-արևելքում (Սևանի ավազան) և հարավ-արևելքում՝ (Ուրմիայի հյուսիսային ավազան):

- Գլխավոր հակառակորդի՝ Ասորեստանի դեմ ստեղծել է ռազմաքաղաքական խմբավորումներ: Ռուսա Ա-ի հետ դաշնակցել ենՓռյուգիայի, Կապադովկիայի, Կիլ իկիայի, Մելիդի քաղաքական միավորումները, Մանայի թագավորությունը: Դրանով Ռուսա Ա-ն դժվարին կացության մեջ է դրել Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին:

- Իրադրությունը փոխվել է, երբ մ.թ.ա. 715-ին Ռուսա Ա-ի զորաբանակը պարտվել է վաչկատուն կիմերներից: Ռուսա Ա-ի դեմ ապստամբել են (Սարգոն II-ի դրդմամբ) որոշ կուսակալներ ու գավառակալներ: Ռուսա Ա-ն ճնշել է այդ խռովությունը, սակայն մ.թ.ա. 714-ին Սարգոն II-ը ներխուժել է Վանի թագավորություն, ավերել ու կողոպտել նրա հարավային գավառները: Պաշտամունքային կենտրոն Մուսասիրի տաճարի կործանումից հետո Ռուսա Ա-ն ինքնասպան է եղել: Նրա հաջորդը՝ Արգիշտի Բ-ն, վերականգնել է նախկին վիճակը, խափանել Ասորեստանի նվաճողական ծրագրերը

Արշավանքներ և բարեփոխումներ

- Վերանվաճեց «լճի այս և այն ափի» 23 երկիր:
- Սևանա լճի ավազանում վերակառուցեց երկու խոշոր ամրոց՝ անվանակոչելով Խալդի և Թեյշեբա գերագույն աստվածների անուններով:
- Վերականգնեց Վանի տերության դիրքերը նաև Աղձնիքում:

- Արշավեց դեպի արևելք՝ նվաճելով մինչև Կասպից ծով ընկած նոր տարածքներ:
- Ք.ա 716 թ Մանայի համար Ասորեստանի և ՈՒրարտուի միչև պատերազմ սկսվեց: Սակայն այդ ժամանակաշրջանում անակնկալ հայտնվեցին քոչվոր կիմերների ցեղերը՝ ասպատակելով թագավորության տարածքները: Ռուսա Ա-ն անհաջողություններ կրեց:

- Քաղ 714 թ Սարգոն Բ-ն արշավեց Վանի թագավորության վրա: Չունեցավ մեծ հաջողություններ սակայն վերադարձին մտավ Արդինի-Մուսասիր և թալանեց Խալդիի տաճարը:
- Քաղ 743-713 թթ. մղած երեսնամյա պայքարի արդյունքում Ասորեստանին հաջողվեց վերականգնել իր դիրքերը:

Արգիշտի Բ

- Վանի թագավորության թագավոր մ.թ.ա. 714-ից: Ռուսա Ա-ի որդին և հաջորդը:Ամրապնդել է կենտրոնական իշխանությունը, վերացրել Ասորեստանի Սարգոն II թագավորի ավերիչ արշավանքի (մ.թ.ա. 714) հետևանքները, հզորացրել բանակը: Արգիշտի Բ-ի օրոք տերության արևելյան սահմանները հասել են մինչև Կասպից ծով, որի վկայությունն է Արտավետ (Արտաբիլ) քաղաքի մոտ, Սավալան լեռան լանջին պահպանված նրա արձանագրությունը:

- Վասպուրականի Արճեշ քաղաքի մոտ թողած արձանագրությունում Արգիշտի Բ-ն հիշատակում է քաղաքի, արհեստական լճի և ջրանցքի կառուցման մասին: Արգիշտի Բ-ն կազմակերպել է մարզական խաղեր, անձամբ մասնակցել մրցումներին:

Ռուսա Բ

- Վանի թագավորության արքա մ.թ.ա. մոտ 685-645-ին: Արգիշտի Բ-ի որդին և հաջորդը: Հզոր նախորդների նման կրել է *«մեծ արքա»*, *«տիեզերաց արքա»*, *«արքայից արքա»*, *«Բիայնիլիի արքա»* և այլ տիտղոսներ:
- Գահակալման սկզբնական տարիներին, կիմերների և սակերի սպառնալից արշավանքների պայմաններում, Ռուսա Բ-ն համախմբել է ուժերը, հիմնել նոր ռազմական ամրություններ ու բերդաքաղաքներ, հիմնականում անխախտ պահել պետության սահմանները:

- Ռուսա Բ-ի օրոք հիմնվեցին ընդարձակ բնակելի թաղամասերով բազմաթիվ քաղաքներ: Անցկացվեցին նոր ջրանցքներ, հիմնվեցին այգիներ, զարգացան արհեստներն ու առևտուրը, ծաղկում ապրեց ամբողջ տնտեսությունը:

Սարդուրի Գ

- Վանի թագավորության արքա մ.թ.ա. մոտ 640-620-ին: Ռուսա Բ-ի որդին և հաջորդը:Կարմիր բլուրի պեղումներից հայտնաբերվել է Սարդուրի Գ-ի անունով սեպագիր երկու աղյուսակ: Ենթադրվում է, որ Սարդուրի Գ-ի օրոք թուլացել է Ուրարտուի հզորությունը, և նա բարիդրացիական հարաբերություններ է պահպանելԱսորեստանի Աշշուրբանի պալ թագավորի հետ:

Թեյշեբաինի



- **Թեյշեբաինի** կամ **Կարմիր բլուր** ուրարտական քաղաք, գտնվում է Հրազդան գետի ձախ ափին: Քաղաքը կառուցվել է Ռուսա Բ-ի կողմից՝ մ. թ. ա.VII դ. առաջին կեսին: Երևան-Էրեբունիից ոչ հեռու կառուցված Թեյշեբաինի բերդաքաղաքը կրում է ուրարտական ռազմի և ամպրոպի աստվածԹեյշեբայի անունը:

Արծաթե սափորի կափարիչ

Հեթանոսական կուռք

Հեթանոսական կուռք



Ուրարտական ոսկե ականջողեր

Ուրարտական արձանագրություն

Հնավայրն այսօր

- Թեյշեբաինի հնավայրը այսօր գտնվում է ծայրահեղ անմխիթար վիճակում՝ չնայած որ այն ընդգրկված է պետության կողմից պաշտպանվող հուշարձանների ցանկում: Հնագույն բնակատեղիին կից գտնվում է գերեզմանոց, որը արդեն ընդգրկում է նաև հուշարձանի տարածքը, պեղված շինություններն աստիճանաբար քանդվում են, բնակատեղիի տարածքը գրեթե ամբողջությամբ պատված է շինարարական ու կենցաղային աղբով, հաճախ հանդիպում են նաև քիմիական թափոններ, որոնց մոտենալը վտանգավոր է մարդու առողջության համար: Չկա շուրջօրյա հսկողություն:

3000-ամյա հնավայրը դարձել է ժամանակակից գերեզմանատուն

Աղբավայր հնավայրի տարածքում

Դիցարանի կառուցվածքը ըստ «Միհրի դռան» արձանագրության տվյալների

- Պատմական Հայաստանի Վանա բերդի մոտ՝ ժայռերի մեջ առկա է ժայռափոր արձանագրություն, որը առավել հայտնի է Միհրի դուռ անունով: Դռան վրայի ժայռափոր արձանագրության մեջ պատկերավոր նկարագրված է Վանի թագավորության դիցարանը՝ աստվածներ, աստվածուհիներ, «սրբություններ» և այլն: Դիցարանի յուրաքանչյուր ներկայացուցիչ ունեցել է իր սրբատեղիները, որտեղ մարդիկ երկրպագել են նրանց:

ԽԱԼԴԻ

- **Խալդին** Վանի թագավորության դիցարանի գլխավոր աստվածությունն է: Նրա անունը Մուսասիրում (Մուծաձիր) հնչել է Ալդի, իսկ ասորեստանյան արձանագրություններից հայտնի է Խալդիա ձևով: Նա ամենայն հավանականությամբ, սկզբում թագավորող տոհմի հովանավորողն է եղել, իսկ հետագայում, պետականության կազմավորմանը զուգահեռ, ստացել է համաբիայնական (համաուրարտական) նշանակություն:

- Խալդիի պաշտամունքը քաղաքական մեծ նշանակություն ուներ: «Խալդին ինձ արքայություն տվեց» արտահայտությունը հայտնի է Վանի թագավորության գրեթե բոլոր թագավորությունների արձանագրություններից: Խալդին ինքն էլ ընկալվում էր որպես արքա և պատկերվում էր գահին նստած:



ԹԵՅՇԵԲԱ

- **Թեյշեբայի** անունը Վանի թագավորության արձանագրություններում մեծ մասամբ գրվում է ամպրոպի, փոթորկի, քամու և բարերար անձրևի աստծուն նշանակող գաղափարագրերով, որը հիմք է տալիս նրան բնութագրելու որպես բնության տարերքը խորհրդանշող աստվածություն: Նա հանդիսանում է Վանի թագավորության դիցարանի երկրորդ աստվածությունը: Թեյշեբան Խալդիի նման տիտղոսներով օշտված չէ: Հայտնաբերված արձանագրություններից միայն մեկում է նա «տեր» անվանված՝ *«Թեյշեբա աստծուն՝ տիրոջը»* տարբերակով:

ՇՎԻՆԻ

- **Շիվինիի** անունը հիշատակված է երրորդը՝ Խալդի և Թեյշեբա աստվածություններից հետո: Այս արձանագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Շիվինիի պաշտամունքը կապվում է նաև Վանա լճի հետ:

ՈՒԱՐՈՒԲԱԻՆԻ

- **Ուարուբաինին** Վանի թագավորության գլխավոր աստվածուհին է և Խալդի գլխավոր աստծո կինը: Նա Վանի թագավորության դիցարանի միակ աստվածուհին է, ում անունը, բացի «Միերի դռան» արձանագրությունից, հիշատակված է նաև այլ արձանագրություններում: Ուարուբաինին արձանագրություններում հիշատակվում է միայն այն ժամանակ, երբ խոսվում է շինարարության կամ այգի հիմնելու մասին: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ նա ոչ միայն դիցարանի աստվածուհիների տիրուհին էր, այլև պտղաբերության, արվեստների ու արհեստների հովանավոր: Հաճախ պատկերաքանդակներում նա ներկայանում է որպես գահին նստած թագուհի՝ ձեռքին ճյուղ:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1.Նշվածներից ով է եղել Վանի Ուրարտուի առաջին արքան

I. Արամե
II. Սարդուրի Ա
III. Արգիշտի Ա

2. Ով է կառուցել Տուշպա Վան մայրաքաղաքը

I. Ռուսա Ա
II. Ռուսա Բ
III. Սարդուրի Ա

3.Որ թագավորն է ստեղծել Ուրարտական սեպագրերը

I. Մենուա
II. Իշպուինի
III. Ռուսա Գ

4. Ասորեստանի որ Արքան քանդեց Խալդ Աստծո տաճարը Արդինի Մուսասիրում

I. Սարգոն Ա
II. Սարգոն Բ
III. Սալմանասար Ա

5. Որ դարում է կործանվել Վանի թագավորություն

I. Քրիստոս. 7 դարում
II. Քրիստոս. 8 դարում
III. Քրիստոս 6 դարում

6. Ուրարտույի որ թագավորն է ստեղծել կանոնավոր բանակ

I. Իշպուինի
II. Մենուա
III. Ռուսա Ա

7. Որ թագավորն է համարվել 4 ծովերի Արքա

I. Սարդուրի Բ
II. Ռուսա Բ
III. Ռուսա Գ

8.Լրացնել բաց թողնված բառը

- Արարատյան դաշտում, Սևանա լճի ավազանում, հարակից շրջաններում տարածվում էր ……:

9.Որ բարեփոխումն է կապված Իշպուինի անվան հետ:

I. Գրային բարեփոխում՝ տեղական սեպագրի ստեղծում
II. Ստեղծեց ամրաշինական մեծ ցանց
III. Ստեղծեց ոռոգման ցանց որը գործում է մինչև օրս

10.Երբ է կառուցվել Արգիշտիխինիլի կենտրոնը

I. Քրիստոսից առաջ 714թ
II. Քրիստոսից առաջ 750թ
III. Քրիստոսից առաջ 776թ

11.Ով է Վանի թագավորության վերջին թվագրվող արքան

I. Ռուսա Գ
II. Սարդուրի Գ
III. Արգիշտի Բ

12.Լրացնել բաց թողնված բառը

- Արգիշտի Ա գործունեությունը վերականգնվում է ճշգրիտ ժամանակագրությամբ շնորհիվ «……տարեգրության»:

13.Լրացնել բաց թողնված բառը

- Սարդուրի Ա-ի գործերի տարեգրությունը հասել է մեզ, որը այսօրվա տարեգրության մեջ կոչվում է «…… տարեգրություն»:

15. Համապատասխանեցնել

I. Արամե
II. Մենուա
III. Սարդուրի Ա
IV. Արգիշտի Ա

1. Ք.ա 810- 786թթ
2. Ք.ա 859-843թթ
3. Ք.ա 786-764թթ
4. Ք.ա 835-825թթ

- Արամե Քրիստոս 859-843թթ
- Սարդուրի Ա Քրիստոս 835-825թթ
- Մենուա Քրիստոս 810- 786թթ
- Արգիշտի Ա Քրիստոս 786- 764թթ